№ 18 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15 **1894** ԵՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15 № 18

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և ազգ. օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՆԵՐԿԱՅ **1894** ԹԻԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է·

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը՝ 10 ր., տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ր., ինն և ութ ամսվանը՝ 8 ր., հոթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր., ամսական 1 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ։

Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն հետեւեալ հասցէով՝ Тифлисъ. Редакція «Мшакъ», իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կանայք հոգաբարձուհիներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Ընտրողական անկարգութիւն. Նամակ Կարսից· Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Մամուլի միջազգային ժողով· Ալաշկերտի կեանքից· Նամակ Թուրքիայից· Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ·—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ· — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ· — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ· Մոռացված օգուտ։

ԿԱՆԱՅՔ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՀԻՆԵՐ

—

Շատ ուրախալի է, որ կանանց հոգաբարձուհի ընտրվելը ուսումնարանների համար, որ մի քանի տեղ ժամանակակից հայեացքների ազդեցութեան տակ՝ ինքն իրան իրագործվել էր կեանքի մէջ, այժմ հաւանութիւն է գտել ձեռնհաս շրջանների կողմից և ստացել է օրինական բնաւորութիւն։

„Մշակի" № 11-ից մեր ընթերցողները արդէն գիտեն ուսումնարանական յանձնաժողովի հաղորդագրութիւնը, որ ասում է՝ „թոյլ է տրվում օրիորդական դպրոցների համար հոգաբարձուհիներ ընտրել, որտեղ ինչպէս յարմար է, խառն տղամարդկանց հետ, կամ առանձին"։

Այսպիսով կնոջ հասարակական գործունէութեան համար բացվում է մի փոքրիկ տարածութիւն և, որտեղ նա կարող է գործադրել իր բարոյական և մտաւոր ոյժերը։

Կանանց մասնակցութիւնը օրիորդական դպրոցների հոգաբարձական գործերում կարող է ունենալ շատ օգտաւէտ հետեւանքներ։ Կանանց համար աւելի հեշտ է և յարմար օրիորդների դպրոցական կեանքին վերաբերեալ ամեն տեսակ կարիքների վերահասու լինելը, ձեռագործութեան պարապմունքների ընթացքին հետամուտ լինելը, աշակերտուհիների մայրերի հետ խօսելխորհրդակցելը, երբ գործը այդ պահանջում է։

Կանայք առհասարակ անից դուրս գործեր չունենալու պատճառով, աւելի մեծ դիւրութեամբ կարող են ազատ ժամեր գտնել—դպրոցական գործերի վերահսկողութեան նուիրելու իրանց։

Մեր մէջ կրթված և հասարակական կեանքով հետաքրքրվող կանանց թիւը օրից օր աւելանում է։ Նրանց շրջանում միշտ կը գտնվեն անձինք, որոնք յարմարութիւն կունենան զբաղվելու դպրոցական գործով։ Կանանց այդ տեսակ գործունէութիւնը կարող է մի քանի ժամանակից յետոյ զրդել կազմելու մայրական խորհրդակցութիւններ, կրթական գործին վերաբերեալ ժողովներ։

Ինչպէս յայտնի է, ընտրողական գործերը երկու տեսակի են. մէկի մէջ ընտրողները այս կամ այն գործի և պաշտօնի համար ընտրում են իրանց միջից, միւսում նրանք ընտրում են իրանցից դուրս անձանց։ Օրինակ, մեր կովկասեան բարեգործական, Հայուհեաց բարեգործական, Հրատարակչական ընկերութիւնները՝ պաշտօնավարներ ընտրում են իրանց անդամների միջից. իսկ կաթողիկոսական ընտրութեան [illegible] դամաւորները ընտրում են թեմական պատգամաւորներ նաև այնպիսի անձանց, որոնք չեն պատկանում այդ թեմին։

Այս կամ այն ձևը, իրաւունքի լայն և նեղ ծաւալը սահմանվում է կանոնադրութեամբ։

Կանանց հոգաբարձուհի ընտրվելը, լայնացնելով կանանց գործունէութեան ասպարէզը, միևնոյն ժամանակ ոչ մի փոփոխութիւն չէ մտցնում ընտրողների իրաւունքի մէջ, ոչ մի սահմանափակում չէ առաջ բերում նրանց իրաւունքների համար, որովհետև նախկին ընտրողական իրաւունք վայելողներին է վերապահված կանանց ընտրել և չընտրելը։ Դա լայնացնում է ընտրողների իրաւունքը՝ տալով նրանց՝ նպատակայարմար ընտրութեան համար նոր հասարակական ոյժեր։

Թողնելով մի ուրիշ ժամանակի խօսելու այն բանի մասին, թէ որչափ կարելի է և հարկաւոր է մեծացնել կանանց իրաւունքների և գործունէութեան ծաւալը, առայժմ՝ աչքի առաջ ունենալով կանանց առաջադիմութեան համար հեշտացրած ներկայ փոքրիկ քայլը՝ ողջունենք նրան իբրև մի մխիթարական հասարակական երևոյթ։

Իսկ հայ կանանց այն առաջին շարքի վրա, որ պէտք է գործեն իբրև հոգաբարձուհիներ՝ մեծ բարոյական պարտք է ծանրանում, որ նրանք աշխատեն ամեն կերպ արդարացնել նրանց վրա դրված յոյսերը, և դրանով հարթել կնոջ գործունէութեան համար աւելիայն ճանապարհ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆ

—

Թիֆլիսի Բեթղեհէմ եկեղեցում, ինչպէս յայտնի է, անցեալ յունվարին տեղի ունեցաւ Յովհաննեան օրիորդաց դպրոցի հոգաբարձական պատգամաւորների ընտրութիւն։ Այդ ընտրութիւնը Թիֆլիսի կոնսիստորիան, ինչպէս և Թիֆլիսի թեմական տեսուչը, անվաւեր գտնելով, չէ հաստատել։ Չը հաստատելու պատճառն այն է, որ ընտրութեան մասնակցել են միայն 28 ծխականներ, մինչդեռ կաթողիկոսական հրամանագրով պէտք է ընտրութեան մասնակցէին ոչ պակաս քան բոլոր ծխականների 1/5 մասը։ Իսկ Բեթղեհէմի ծխականների թիւը աւելի քան 200 է։

Այդ պարզ, օրինական պատճառով չը հաստատելով առաջին ընտրութիւնը, կոնսիստորիան նշանակում է երկրորդ ընտրութիւն, որ պէտք է կատարվէր փետրվարի 13-ին։ Այդ օրը ծխականները մեծ թիւով հաւաքվելով եկեղեցի, գտնում են եկեղեցու դռները փակ։ Բանից դուրս է գալիս, որ ծխատէր քահանան չէ ուզեցել հնազանդվել կոնսիստորիայի կարգադրութեան, համարելով իր հողային հարստութիւնը կատարեալ, վերջնական սեփականութեան է հասել։—Ցարիներ են անցել այդ օրից և այժմ կալուածները... պարտքի տակ են։ Այդ ինչպէս էր, որ հոգաբարձութեան ժամանակ կար գոնէ 1200—1500 ռուբլի ռոճիկ ստացող «ժիր և քաջ» կառավարիչ և պարտք չէր մնում, իսկ այժմ կառավարիչը ստանում է 600 ռուբլի և պարտք էլ կայ։ Այդ ինչից է, որ տարուց տարի աղբիւրը ցամաքում է, անտառները կոտորվում են անխնայ, իսկ դուք պարտքի տակ էք։ Հազար ու մի այսպիսի հարցեր կան, բայց ով պէտք է պատասխանէ, քանի որ կատարեալ անտէրութիւն է և «Աստուծոյ ոչ երկնչիմ և ի մարդկանէ ոչ ամաչեմ» պրինցիպը տիրում է անխռով։

Զարմանալի երևոյթ։ Ցեռնում էք գաւառական մի փոքրիկ քաղաքում գործող բարեգործական ընկերութիւնը. երբ լրանում է տարին, հաւաքվում են անդամները, ընտրում են վերատեսուչ յանձնաժողով, որ քննում է հաշիւները, գրքերը, իմանում է թէ ինչպէս է մտել և ուր է գնացել ընկերութեան մի քանի հարիւր ռուբլի եկամուտը, կազմում է արձանագրութիւն իր նկատած թերութիւնների մասին և յանձնում է ընդհանուր ժողովին, որը նորից քննում է հաշիւները և իր կարծիքը յայտնում։ Այդպիսի գործավարութիւնից փչում է լուսաւոր դարի հոտը. այդ է արդարութիւնը, այդ է իսկական հսկողութիւնը։ Բայց այդպիսի կանոնաւորութեան կողքին դուք տեսնում էք միջնադարեան հասկացողութիւն աւելի խոշոր և մեծ գործերի վերաբերմամբ։ Տասնեակ տարիների ընթացքում չէ յայտնվում մի անձնաւորութիւն կամ մի հիմնարկութիւն, որ քննէր, վերատեսչէր այդ գործերը. ով ինչպէս ուզում է, ասնում է հաշիւը։ Չը կայ հսկող, բարձրից դիտող աչք. յափշտակութիւնը կատարեալ է, անզուսպ, անխիղճ։

Մինչև երբ պէտք է շարունակվի այս դրութիւնը. մինչև երբ ահագին կալուածքները պէտք է անհատների հարստութեան աղբիւր մնան։

Լէօ

Ղարաբաղի վանքական կալուածները կազմում են մի խոշոր հաստատութիւն, որը չափվում է տասնեակ հազար դեսեատիններով։ Այդ հաստատութիւնը պէտք է մշտական արդիւնք տայ Շուշու թեմական դպրոցին—և լաւ արդիւնք։ Բայց ինչ ենք տեսնում։ Կալուածները—չորացած, անպտուղ աղբիւր, իսկ դպրոցի ուսուցիչները կարօտ են մնում կանոնաւոր ռոճկի և փոքրիկ, անմեղ երեխաները, սովից ու ցրտից զողզողալով, թաղման չքեղ հանդէսներ են կատարում հաստափոր դիակների վրա և լարում են ականջները լսելու համար, թէ ինչ բաժին պէտք է տան թշուառին՝ հարիւրաւոր թշուառների արտասուքից գոյացած հարստութիւնից։ Ծագում է զարմանալի, տարօրինակ հարց. էլ ուր են գնում կալուածների արդիւնքները, երբ վանքերը քանդվում են օր օրի վրա, իսկ դպրոցն այդպէս է։ Բայց այս հարցին մի հեշտ և կարուկ պատասխան տալու համար չը պէտք է ոչ երկնքի աստղերը քննել, ոչ իջնել ծովի յատակը և այնտեղ խուզարկութիւն անել։

Ձեր առաջ պարզ և բաց է ամեն ինչ. պայծառ լոյսով ողողված մի տարածութեան մէջ դուք տեսնում էք մի քողարկված սպունգ, որ իր անհամար ծակերով կլանում է այն ամենը, ինչ պէտք է բաժանվէր կալուածներից իբրև օգուտ. և սպունգի «մաքրարարքածը» առատ թափվում է մի անյատակ խորութեան մէջ, որը դուք իսկոյն կը ճանաչէք, եթէ փորձէք համեմատել մարդկային գրպանի հետ։ Այդ գործողութիւնը կատարվում է անընդհատ, մի արտասովոր եռանդով։ Աւելի մի լաւ գործի արժանի այդ կանոնաւորութիւնը, եռանդը, առատութիւնը ունի մի միայն աղբիւր, որ գաղտնիքների թաւում չէ գտնվում։ Այդ աղբիւրը Հայաստանեայց եղեռիաների գոված, փառաբանած անտէրութիւնն է և ուրիշ ոչինչ...

Եթէ չը լիներ այդ անտէրութիւնը, եթէ դէթ մի ժամ, մի օր անիրագործելի մտքերի շրջանից դուրս գտնվող բան համարվէր մի մանրամասն ու անաչառ քննութիւն կամ մի մանրամասն պատմութիւն կազմել անցած գնացած և այժմ կեանք վարող գործերից, ինչեր դուրս կը գային։ Ինչպէս կը պարզվէր մեծամեծ վարպետութիւններով ստեղծած յափշտակութիւնների սիստեմը, մի սիստեմ, որի մէջ հանճար են փայլեցրել հոգաբարձութիւնները, նրանց լենամիներն ու կնքահայրերը։ Ինչպիսի վառ գոյներով կը նկատվէին մի շարք հերոսներ. կը կանգնէին փորերը ագգասիրաբար ուռցրած զանազան բէկեր ու աղաներ, որոնք կալուածքների կառավարիչ դառնալով՝ մի կտոր հացի տիրացել են և այդ բաւական չէ—ազգային գործիչի փառաւոր անունն են վաստակել նրանով միայն, որ երբ ահագին կալուածները անխնամ մնալով չեն կարողացել յագեցնել նրանց, այդ վեհաշուք բէկերին ու աղաներին, նրանք ռոճիկ են պահանջել քաջութեամբ և կարողացել են մինչև անգամ կոնսիստորիայում պահվող «որբերի և այրիների գանձանակը» հանգիստ խղճով դնել իրանց գրպանում, իբրև վարձատրութիւն իրանց անօգուտ, ընդհանուր ծառայութեան, իբրև ռոճիկ՝ ոչինչ չանելու համար։

Շատ հեռու կը տանէր մեզ կալուածական գործում հերոսական հռչակ ստացած հոգևորականների, հոգաբարձուների և կառավարիչների պատմութիւնը։ Մենք կը տեսնէինք այն կախարդական ճանապարհը, որով կալուածների բերքերը, արդիւնքները ուղղորվում էին դէպի այնպիսի խորշեր, որոնք դպրոցի և վանքերի բարեկեցութեան անհաշտ թշնամիներն են։

Բայց և այդպէս, չարիքը շատ չէր մեծ։ Քանի որ կալուածները կառավարում էր հոգաբարձութիւնը, էլի դէսից-դէնից հաւաքվում էր մի գումար, որից կառավարիչը ռոճիկ էր ստանում, իսկ վանքերը միանգամից սովամահ չէին դառնում և ծախքի համար գրօշներ ունէին։ Այդ բոլորից յետոյ աւելանում էին մի քանի հարիւր ռուբլիներ, որոնք դպրոցի բաժինն էին դառնում։ Իսկ այն օրվանից, երբ գրպանը աստուածացնողների աշխատութեամբ կալուածները խլվեցան հոգաբարձութեան ձեռքից, ահա այդ օրվանից ահագին հողային հարստութիւնը կատարեալ, վերջնական սնանկութեան է հասել։—Ցարիներ են անցել այդ օրից և այժմ կալուածները... պարտքի տակ են։ Այդ ինչպէս էր, որ հոգաբարձութեան ժամանակ կար գոնէ 1200—1500 ռուբլի ռոճիկ ստացող «ժիր և քաջ» կառավարիչ և պարտք չէր մնում, իսկ այժմ կառավարիչը ստանում է 600 ռուբլի և պարտք էլ կայ։ Այդ ինչից է, որ տարուց տարի աղբիւրը ցամաքում է, անտառները կոտորվում են անխնայ, իսկ դուք պարտքի տակ էք։ Հազար ու մի այսպիսի հարցեր կան, բայց ով պէտք է պատասխանէ, քանի որ կատարեալ անտէրութիւն է և «Աստուծոյ ոչ երկնչիմ և ի մարդկանէ ոչ ամաչեմ» պրինցիպը տիրում է անխռով։

Զարմանալի երևոյթ։ Ցեռնում էք գաւառական մի փոքրիկ քաղաքում գործող բարեգործական ընկերութիւնը. երբ լրանում է տարին, հաւաքվում են անդամները, ընտրում են վերատեսուչ յանձնաժողով, որ քննում է հաշիւները, գրքերը, իմանում է թէ ինչպէս է մտել և ուր է գնացել ընկերութեան մի քանի հարիւր ռուբլի եկամուտը, կազմում է արձանագրութիւն իր նկատած թերութիւնների մասին և յանձնում է ընդհանուր ժողովին, որը նորից քննում է հաշիւները և իր կարծիքը յայտնում։ Այդպիսի գործավարութիւնից փչում է լուսաւոր դարի հոտը. այդ է արդարութիւնը, այդ է իսկական հսկողութիւնը։ Բայց այդպիսի կանոնաւորութեան կողքին դուք տեսնում էք միջնադարեան հասկացողութիւն աւելի խոշոր և մեծ գործերի վերաբերմամբ։ Տասնեակ տարիների ընթացքում չէ յայտնվում մի անձնաւորութիւն կամ մի հիմնարկութիւն, որ քննէր, վերատեսչէր այդ գործերը. ով ինչպէս ուզում է, ասնում է հաշիւը։ Չը կայ հսկող, բարձրից դիտող աչք. յափշտակութիւնը կատարեալ է, անզուսպ, անխիղճ։

Մինչև երբ պէտք է շարունակվի այս դրութիւնը. մինչև երբ ահագին կալուածքները պէտք է անհատների հարստութեան աղբիւր մնան։

Լէօ

Լ՝սան Ինչ՝ Ինչ՝ Ինչ՝

ԴԻՆԱՐ ԴԱՑՈՒԵՆՇՎՈ ՎԻՎԱՐՈՒՄ

ԴՎԿԺՎԱՐՈՂՑ ԴՎԿՃՈՏՅՈ

«Կոչվի հիվդշվը։ Լեռնոտը դդ քանիդ ոտի ամի վոգվ մդբսան տաշ Դիանդվի ոտի տոս Ռովի վմդդյունդ վիոիմանս ենդոմն վեռ դ։ դ ղյուսովիվվ Ռովանենշոնոտ մդր սս՝ տչա դ ովրա դանիզ։ «Դդ բրան ներ ՑԱՂՈՎՈՅԻ

—

սանամ Ռդովիանդոտվ ենո յրբա։ տոմտա մդ դ։ դ Լեռնշվի ղվի։»

—

«Ճշր վոքանոտ մվ դվի։»

դանանշտ դոտդ Ռդ։ Ռեր մվ Լեռոս

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 փետրվարի։ Միջոցներ են տրված անայնագործական առարկաներ ձեռք բերելու՝ ռուսաց պահեստի համար Նիժ-Եօրկում։—Նախագծվում է որոշել առևտրական անուանացուցակ՝ արգելելով առևտուր անել ուրիշի անունով։—Պետական խորհրդին առաջարկվում է գիւղական բանկի վերակազմութեան նախագիծը։

ՊԱՐԻԶ, 12 փետրվարի։ Այսօր քրէական դատարանում քննվում էր Լէօնտիեվի գործը, որը անցեալ տարվայ նոյեմբեր ամսին փորձել էր սպանել սերբիական դեսպան Գիորգեվիչին։ Դատարանը դատապարտեց ցմահ տաժանակիր աշխատանքների։

ՎԻԵՆՆԱ, 12 փետրվարի։ Մեղադրված 14 անարխիստներից 8-ին դատարանը մեղադրեց պետական դաւաճանութեան համար և դատապարտեց նրանց ծանր բանտարկութեան 2-ից մինչև 10 տարով. 6 մեղադրվածներին արդարացրեց։

ԼՕՆԴՕՆ, 12 փետրվարի։ Այսօր Ֆինսբերիան դերեզմանոցում տեղի ունէր անարխիստ Բուրդէնի թաղումը։ Դէպի գերեզմանոցը տանող ճանապարհի վրա թաղման հանդէսը շրջապատեց կառաքի ամբոխը, բաղկացած առաւելապէս բանւորներից, «թող կորչի անարխիա» աղաղակներով։ Ամբոխը մի քանի անգամ պատեց ոստիկանների կրկնակի շղթան. տղամարդիկը և կանայքը, շրջապատելով դագաղին ուղեկցող կառքերը, բռունցքներ էին ցոյց տալիս նրանց մէջ նստողներին և վերջապէս յաղթելով ոստիկանութեանը՝ ցեխոտեցին դիակառքը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 փետրվարի։ Պետական խորհուրդը կը քննի հետեւեալ գործերը. ատիճանաբար պակասեցնել և վերացնել պրէմիաները արտահանվող սպիրտի համար. սահմանից դուրս սպիրտի արտահանութեան կանոնները փոփոխել, և նաւթային ֆօնտանները կանոնաւորելու համար լրացուցիչ կանոններ հրատարակել։

ՊԱՐԻԶ, 13 փետրվարի։ Սենատի մաքսային յանձնաժողովը ընդունեց պատգամաւորների ժողովի նախագիծը հացի մաքսահարկի մասին։ Վիճաբանութիւնները երկուշաբթի կը սկսվեն սենատում։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Փետրվարի 11-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արժէ . .	93 ր.	70 կ.
Բերլին վրա 100 մարկ — . .	48 ր.	85 »
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	37 »	17½ »
Ոսկի — — արժէ . .	7 »	53 »
Մաքսային կուպոններ — . .	150 »	50 »
Արծաթ — — — . .	— »	— »
Բօրսային դիսկոնտներ — . .	5 »	7 »
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի .	103 »	50 »
— — — — 2-րդ . .	102⅞ »	— »
— — — — 3-րդ . .	— »	— »
5% ոսկեայ բէնտա	160 »	75 »
4½ ոսկեայ փոխառութիւն. . . .	— »	— »
Արեւելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	— »	— »
— — — 2-րդ —	102⅛ »	— »
— — — 3-րդ —	102 »	25 »
— — — 4-րդ —	— »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	243 »	75 »
— — երկրորդ —	228 »	— »
Պետական երկաթուղային բէնտա.	103 »	— »
4½ բէնտա	— »	— »
4% Ներքին փոխառութեան . . .	95⅝ »	— »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	101⅝ »	— »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.		
Գրաւ. թղթ. — — .	191 »	— »
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի.	99⅛ »	— »
4½% գրաւական թղթեր կալուած.		
փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ. .	154 »	50 »
— — — թղթադ. .	101⅛ »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.		
ընկերութեան օբլիգացիաները.	101⅞ »	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	101 »	25 »
Օդէսայի — —	100⅝ »	— »
Թիֆլիսի — — .	98 »	25 »
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	98 »	25 »
— — Քուտայիսի — .	98 »	25 »

Ս. Պետերբուրգի բօրսայի արամադրութիւնը խաղաղ է։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

1) «ԷՎԷԼԻՆԱ», էտիւդ, գինն, է . . 50 կոպ
2) «ԱՑՍՏԵՂ ԵՒ ԱՑՆՏԵՂ», » . . 10 »
3) «ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖ. ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ» . , . . 25 »
4) Նոյնը՝ գերմաներէն լեզուով . . 25 »
5) «DIE HUNGERSNOTH IN TURKISCH ARMENIEN» . . . . . 20 »

Վաճառվում է «Մշակի» խմբագրատունը և Թիֆլիսի գրավաճառանոցներում։

(№ 23) 8—10

Վաճառվում է

„ՄՏՔԻ ՄՇԱԿԸ“

Թ. ՄԱԼՈՒՄԵԱՆԻ

Գինն է 50 կոպէկ։ Դիմել հեղինակին, կամ կենտրոնական գրավաճառանոցին, Թիֆլիսում։ (№ 18) 1—5

ԼՈՒՍԱՆԿԱՐ ՐՕԻՆՕՎԻ ՄՕՏ

Վաճառվում են ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ լուսանկար պատկերները.

1) Մեծադիրը, պատից կախելու, ճանապարհածախսով հանդերձ—3 բուբլի։

2) Կաբինէտային, ճանապարհածախսով—40 կ. Ցանկացողները պէտք է դիմեն այս հասցէով.

Тифлисъ. Фотографія Роинова, на Эриванской площади. Կարելի է ստանալ և վերադիր վճարով наложен. платежъ.) (№ 25) 8—10

Վաճառվում են

Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆԻ և ՐԱՖՖԻ

Մեծադիր պատկերները

Կանխիկ վճարով առնողներին՝

100 հատ արժէ. . . .	20 ր.
50 — —	12 »
10 — —	3 »
1 — ճանապարհածախսով	40 կ.

Դիմել՝ Тифлисъ. Саркису Согомонянцъ.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿԻ պատկերը ցանկացողներին ևս ուղարկելով հատին 50 կ. դիմում են նոյն հասցէով։ (№ 18) 1—3

ՄԻՍ ԶԵՆԻՏԱՆ ծախում է երկու ՍՊԻՏԱԿ ԹՈՒԹԱԿՆԵՐ կակաչու. մինը նոցանից, որ լիսում է, շուաքնում է, երգում է և հաչում է, արժէ 150 ՐՈՒԲԼԻ. միւսը արժէ 50 ՐՈՒԲԼԻ։ Կարելի է տեսնել ցերեկվայ ժամի 12-ից մինչև 5-ը „ԵՐՕՊԱ„ հիւրանոցում, ցիրկի մօտ։ (№ 17) 2—3

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վենէրական (սիֆիլիս) հիւանդութիւնների։

Կ. Գ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10½ ժ. աչքի և նեարդային հ.

Դ. Դ. ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10½—11½ ժ. ներքին, երեխաների և կանանց հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—11½—12½ ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—12½—1 ժ. կանանց հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Գ. ԳՈՒԻՐԿՈ—6—7 ժ. սիֆիլիսի և մէզի ու սեռական օրգանների հ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—7½ ականջի, կոկորդի և քթի ու նեարդային հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԳՈՒԻՐԿՈ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խլխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։ Հիւանդանոցումը ընդունվում են և ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ։

Հիւանդանոցի վերատեսուչ՝ բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ։ (№ 72)

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՒ ՀԱՍՑԷՆԵՐԸ

1 և 2 պոլիցիական մասեր՝ Վ. ԱՐԾՐՈՒՆԻ, Գոլովինակի պրոսպէկտ, № 5,

3, 4 և 5 մասեր՝ Կ. ՂՕՆԵԱՆ, Սադովայա փողոց, № 19։

6 մաս, Գ. ՏԷՐ-ԱՍԱՏՈՒՐԵԱՆ, Վօրոնցօվկայա հրապարակ, տ. Եղիզարովի։

7 մաս, Հալաբար, Մ. ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆ, Կախետինսկայա հրապարակ, տ. Փօրաքօվի։

8 և 9 մաս, Կուկիա, Կ. ԹԱՐԽԱՆԵԱՆ, Ելիզավետինսկայա փող. տ. № 70.

10 մաս, ԲԼԽՏԶԱՄԷՐ, Ելիզավետեան փ., № 86.

(№ 13). 3—4

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ

Հայկական ներկայացումն Բաժանորդագրութիւն 18.

Հինգշաբթի, փետրվարի 17-ին, հայ դերասանական խումբը կը ներկայացնէ՝

I

ՄԵԾԱՊԱՏԻՒ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐ

կամ. 3 գործ., հեղ. Պարոնեանի։ Փոխադր. Ա. Սարդարեան-Արեւշատեանի

II

ԶԳՐՈՒ ԲԱՆ Է կամ ՕՐԹԱՃԱԼՈՒ ՔԷՖ

վօդ. 1 գործ. հեղ. Սարդ.-Արեւշատեանի

Սկիզբն է ճիշդ 7½ ժամին։ Տեղերի գինը սովորական է։ 1—2

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ յայտնում է ի գիտութիւն ընկերութեան անդամների, որ ամսիս 20-ին, կիրակի, առաւօտեան ժամը 11-ին, Թիֆլիսի Դումայի դահլիճում, նշանակված է ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ, որի պարապմանն առարկաները լինելու են. 1) Ընկերութեան 1894 թի նախահաշիւի քննութիւնը և հաստատութիւնը. 2) Ընդհանուր ժողովի նախագահի, քարտուղարի, խորհրդի 5 անդամների և 3 փոխ-անդամների ընտրութիւնը. 3) Վերաստուգող յանձնաժողովի 3 անդամների ընտրութիւնը. 4) Դրամագլխական յանձնաժողովի 5 անդամների ընտրութիւնը, և 5) Ընկերութեան 15 անդամների առաջարկը՝ կարսի և Երեւանի նահանգների կարօտեալներին օգնութիւն հասցնելու համար։

Ծանօթ. Անդամները հրաւիրվում են նորոգել իրանց անդամակցութիւնը, դիմելով պ. Եփրեմ Ծատուրեանի մագազինը։ (№ 18) 1—3

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԷՐԷԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ տանի մէջ ՆՇԱՆԱԿՎԱԾ Է ԱՃՈՒՐԴ, առանց կրկնաճուրդի, վարձով ապրու համար էջմիածնայ կալուածքը, այն է՝ երեք կրպակներ նկուղով, կալծուղիկ եկեղեցու մօտ, 4-ին մարտի սոյն ամի, և մի տուն 5-րդ քաղաքամասում, Գրեաձոնի անունով փողոցի վրա, 7-ին մարտի։

Անդամ Կոնսիստորիայի՝ Գաբրիէլ քահ. Տէր-Գաբրիէլեանց

(№ 18) 1—3

ԿԱԽԷԹԻ ԱՑԳԵՏԷՐԵՐԻ

ՆՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Յատուկ նպատակ ունենալով մատակարարել տեղական և ներքին Ռուսաստանի շուկաները բացառապէս Կախէթի բնական գինիներով ընկերների այգիներից, սկսում է իր գործողութիւնները այս տարվայ փետրվարի 5-ից։ Արտահանութիւն, մեծ քանակութեամբ և փոքր քանակութեամբ ծախելը կը կատարվի Թիֆլիս քաղաքում ընկերութեան պահեստներում և մագազիններում, որ գտնվում են՝ 1-ն Միխայլովսկայա փողոցի վրա, տուն Սլիվիցկու. 2-րդ, Երեւանեան հրապարակի վրա, Թամամշևի քարվանսարա։

(№ 13) 3—10

ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ

(Առանց սակարկութեան)

ՓԵՏՐՎԱՐԻ 1-ից ՄԻՆՉԵՒ ՄԱՐՏԻ 1-Ը

Եղբ. Գուլասպօվների մագազինում և պահեստում, Դվօրցօվայա փողոցի վրա, կալուածական Բանկի տան մէջ և Սարաջևի ու Ծովիանովի տան մէջ, „բակում“։

Զանազան ապրանքներ։ Կանանց և երեխաների կաստօրի և յարդե գլխարկներ 30 կոպէկից մինչև 1 ր., տղամարդկանց կաստօրի գլխարկներ 1 ր. 25 կոպէկից սկսած և աւելի թանգ, վուալներ 20 կոպէկով, կրուժեվաներ, ժապաւէններ, ծաղիկներ, զգեստների և գլխարկների համար զուգաներ՝ արշինը 20 կոպէկով և աւելի թանգ, անձրևակալներ, հովանոցներ և ձեռնոցներ 20 կոպէկից, ժերսե 1 բուբլուց սկսած և աւելի թանգ։ Եւ նոյնպէս մեծ ընտրութիւն մոդային և գալանտերէյնի ուրիշ ապրանքների էժան գներով, որի մէջ պատւելի հասարակութիւնը կը համոզվի՝ այցելելով մեր վաճառումն։

(№ 12) Ցարգանքով՝ ԵՂԲ. ԳՈՒԼԱՍՊՕՎՆԵՐ 7—30

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ

ՄԵԾ պահանջը և ահագին հուչակը ՄԵՐ ՀՆԱՐԱՆ՝

ԾԱՂԿԱՑԻՆ Օ-ԴԷ-ԿՕԼՕՆԻ,

ԳԼԻՑԵՐԻՆԵԱՆ ՍԱՊՕՆԻ ՆԿԱՐՆԵՐՈՎ,

ԳԼԻՑԵՐԻՆԵԱՆ ՓՈՇԻ,

ԷԿՍՏՐԱԿՏ ՊԱՐՍԿԱԿԱՆ ՑԱՍՄԻԿԻ ԵՒ ԸՆԶԷԴԱՑԻ ԾԱՂԻԿՆԵՐԻՑ,

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԱՐԿՂԻԿԻ ԵՒ ԱՑԼՆ

սիրում է մեզ հետ մրցողներին ՆՄԱՆԵՑՆԵԼ ոչ միայն անունները, բայց և մեր մանագիտութիւնների արտաքին տեսքը, որպէս զի դրանով մոլորեցնեն հասարակութիւնը և այդպիսով մեծացնեն իրանց արդիւնքների վաճառումը. ահա այդ պատճառով խնդրում ենք պատւելի գնողներին մեր արդիւնքները գնելու ժամանակ լուրջ ուշադրութիւն դարձնել ֆիրմայի և գործարանային մարկայի վրա։

БИКѢ БРОКАРЪ и К° ВЪ МОСКВѢ ФАБРИЧН. ШТЕМПЕЛЬ УТВЕРЖД. ПРАВИТЕЛ. 1864 г. 1864 г.

ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.

(№ 8) 1, 15 2—8

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Նադօրնայա փողոց, № 9)

Ցանկացողք, ունենալ իրանց առևտրական գործերի համար ուսման ընթացքը ստացած աշակերտներ և աշակերտուհիներ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնադրին, Ս. Մանուէլեանցին։ Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն, կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատված ծրագրի համեմատ, և ունեն օրինաւոր ատեստատներ։

Կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, учредителю коммерческихъ курсовъ С. П. Мануэльянцу.

№ 88 8—20

Дозволено цензурою, Тифлисъ, 14 Февраля 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.